ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 1-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

*
* *

Մայիսի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ի դատաստան եկի յաշխարհս յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն և որք տեսանեն՝ կուրասցին» (Հովհ. Թ 39) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 11-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական ժողով:

*
* *

Մայիսի 15-ին, կիրակի.—Երկրորդ Մաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ովսաննա Բարձրելոյն, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն» (Մարկ. ԺԱ 9) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ավագ եպս. Ասատուրյանը: «Հայր մեր»-ից առաջ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը ընթերցեց Հյուսիսային Կովկասի և Անդրկովկասի կրոնապետերի ժողովի ուղերձը (տես էջ 13):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 4-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի Վիրապէն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

Հունիսի 5-ին, կիրակի.—Տօն Կաթուղիկէ Ս. Էջմիածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եկայք շինեսցուք սուրբ զիւորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» բնաբանով:

*
* *

Հունիսի 12-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Հունիսի 15-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական ժողով:

*
* *

Հունիսի 19-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ աբդ. Մկրտչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Հրեշտակ երկրաւոր, սուրբ հայր մեր և լուսաւորիչ, զորդիս Եկեղեցւոյ Հայաստանեայց, որք պատուեմք զյիշատակս քո՝ յիշեա առաջի Քրիստոսի, զի կեցուսցէ զմեզ» (Ցայսմաւուրք) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 26-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Տէր, ոչ սերմն բարի սերմանեցէր յագարակին քում, արդ ուստի՞ ունիցի զորոմն» (Մատթ. ԺԳ 27) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: